ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2023թ. **N --- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով, Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N694-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Մարտին Քալաշյանի դիմումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության կողմից Երևան համայնքին փոխանցվող «Երևան Սիթի տուր» զբոսաշրջային ավտոբուսային տուրը սպասարկող երկու Guleryuz Cobra մակնիշի երկհարկանի ավտոբուսները՝ 110.346.894 մլն (հարյուր տաս միլիոն երեք հարյուր քառասունվեց հազար ութ հարյուր ինսունչորս հազար) դրամ սկզբնական արժեքով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված երկու ավտոբուսները նվիրել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանը՝ տուրը արդիականացնելու, տուրի ծրագիրը զարգացնելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևանտրանս» ՓԲ ընկերության կողմից շահագործվող երկու երկհարկանի զբոսաշրջային ավտոբուսները սպասարկում են «Երևան Սիթի տուր» զբոսաշրջային երթուղին:

Քաղաքային երկհարկանի ավտոբուսային տուրը, կամ ինչպես աշխարհում ընդունված է ասել «hop on-hop off» երթուղին, իրենից ներկայացնում է քաղաքային տուր՝ հատուկ նախատեսված և կահավորված ավտոբուսներով, որտեղ երթի ընթացքում աուդիոգիդը պատմում է քաղաքի մասին: Երթուղով նախատեսված տեսարժան վայրերի կանգառներ կան, որտեղ զբոսաշրջիկները կարող են դուրս գալ, պտտվել, նկարվել, ապա, հաջորդ ավտոբուսով, շարունակել տուրը:

Տուրի համար մշակվում է տոմսային հատուկ համակարգ՝ առցանց և ցանցից դուրս:

Քաղաքային զբոսաշրջային երկհարկանի ավտոբուսներով տուրի հայեցակարգը միջազգային հայեցակարգ է, որը մշակվել է բրիտանական «Citysightseeing» ընկերության կողմից: Վերոնշյալ ընկերության ապրանքանիշով աշխարհի ավելի քան 150 քաղաքներում իրականացվում են ավտոբուսային տուրեր: Գրեթե բոլոր քաղաքներում, որտեղ կան երկհարկանի ավտոբուսային տուրեր, ներդրված է միջազգային հայեցակարգը:

«Երևան սիթի տուր» երթուղին ունի արդիականացման, միջազգային չափանիշներին համապատասխանեցման կարիք: Այս պահին, տուրը լիովին, ամենօրյա ռեժիմով չի գործում, ավտոբուսների տեխնիկական վիճակը բավարար չէ լիարժեք սպասարկման համար, տուրի աուդիոգիդի տեքստերը, տեխնիկական որակը չեն համապատասխանում միջազգային չափանիշներին, տուրի տոմսերը հնարավոր չէ ձեռք բերել առցանց, ինչպես նաև քարտային վճարմամբ:

Երևան այցելած զբոսաշրջիկները հիմնականում գանգատվում են առանց տուրիստական ընկերությունների և զբոսավարների, ինքնուրույն քաղաքին ծանոթանալու հնարավորության բացակայությունից: «Երևան սիթի տուր»-ի՝ միջազգային հայեցակարգին համապատասխան շահագործումը մասնակիորեն կլուծի այս խնդիրը: Մյուս կողմից, այն կարող է տարիների ընթացքում ունենալ նաև բավական բարձր շահութաբերություն: Այս պահին, տուրից ստացված շահույթը նվազագույն է:

Տուրի արդիականացումը մեկնարկելու նպատակով հունիս ամսին Երևան է հրավիրվել «City Sightseeing» ընկերության ներկայացուցիչը, նրա հետ քննարկվել են տուրի ֆրանչայզը ձեռք բերելու պայմանները, համագործակցության պայմանագիրը:

Կարևորելով վերոնշյալ խնդիրները և հանգամանքները, ինչպես նաև արդիականացման աշխատանքների լայնածավալությունը՝ առաջարկվում է ընդունել սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանտրանս» ՓԲ ընկերությանը պատկանող գույքը որպես նվիրատվություն ընդունելու, «Երևանի ավտոբուս» ՓԲ ընկերությանը նվիրատվություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևանտրանս» ՓԲ ընկերությանը պատկանող գույքը որպես նվիրատվություն ընդունելու, «Երևանի ավտոբուս» ՓԸ ընկերությանը նվիրատվություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ